ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Սամիր Զուբերի՝ ILAE Դասակարգման և Տերմինաբանության հանձնաժողովի ղեկավար

Էմիլիո Պերուկկա՝ Էպիլեպսիայի դեմ պայքարի միջազգային լիգայի նախագահ

Epilepsia-ի այս համարում Էպիլեպսիայի դեմ պայքարի միջազգային լիգայի (ILAE) Դասակարգման և Տերմինաբանության հանձնաժողովը ներկայացնում է 1989թ. ի վեր ILAE դիրքորոշման առաջին փաստաթուղթերը ցնցումների և էպիլեպսիաների դասակարգման մասին՝ ձևակերպված երեք փոխլրացնող հատվածներով։[1-3] Այս փաստաթղթերը ILAE բազմաթիվ հանձնաժողովների ու խմբերի, ինչպես նաև այն անձանց աշխատանքի վերջնարդյունքն են, ովքեր վերջին 28 տարիների ընթացքում վերլուծել ու հրապարակումներ են արել դասակարգման վերաբերյալ։ Այս գործընթացը մեծ թափ ստացավ ILAE Դասակարգման և Տերմինաբանության հանձնաժողովի 2010թ. եզրակացության հրապարակման հետ, որում ներկայացված էին էպիլեպսիայի դասակարգման նոր հասկացությունները և տերմինաբանությունը, առավել ուշագրավ պատճառները։[4] Այս փաստաթուղթը շատ բանավեճեր առաջացրեց էպիլեպսիայով զբաղվող մասնագետների համայնքի ներսում և սկիզբ դրեց 7 տարի տևած շարունակական գործընթացի, որում հանրային ներգրավվածությունը ամբողջ աշխարհից, Հանձնաժողովի հետագա հրապարակումները և առցանց մեկնաբանությունները հանգեցրին ցնցումների և էպիլեպսիաների 2017թ. դասակարգմանը։ Այս գործընթացի արդյունքում դասակարգումը զգալիորեն փոխվեց։ Այս թողարկման հոդվածները պետք է դիտվեն որպես մեկ ամբողջական աշխատանք՝ ներկայացված է երեք փաստաթղթերում, որով լուսաբանվում են բոլոր մանրամասները և տրվում են բացատրություններ այն փոփոխությունների համար, որոնք այնքան կարևոր են էպիլեպսիա ունեցող պացիենտների խնամքի հարցում։

Գիտելիքների աճին և հասկացությունների զարգացմանը զուգահեռ՝ դասակարգումները կփոփոխվեն: Այնուամենայնիվ, պետք է հավասարակշռություն լինի ժամանակի ընթացքում կայունության և կլինիկական պրակտիկայի ու հետազոտության ընդհանուր լեզու գտնելու պահանջի միջև: Կլինիկական դասակարգումների հաստատվելու համար անհրաժեշտ է մի քանի տարի, և չնայած որ 2017թ.ցնցումների և էպիլեպսիաների դասակարգման հետագա հիմնարար փոփոխություններ կարճաժամկետից միջնաժամկետ հեռանկարում նախատեսված չեն, ILAE կշարունակի պատասխանել էպիլեպսիայով զբաղվող մասնագետների համայնքից ստացվող հետադարձ կապին:

Հղումներ

1. Scheffer IE, Berkovic S, Capovilla G, et al. ILAE classification of the epilepsies: Position paper of the ILAE Commission for Classification and Terminology. Epilepsia 2017;58:512–521.
2. Fisher RS, Cross JH, French JA, et al. Operational classification of seizure types by the International League Against Epilepsy: Position Paper of the ILAE Commission for Classification and Terminology. Epilepsia 2017;58:522–530.
3. Fisher RS, Cross JH, D'Souza C, et al. Instruction manual for the ILAE 2017 operational classification of seizure types. Epilepsia 2017;58:531–542.
4. Berg AT, Berkovic SF, Brodie MJ, et al. Revised terminology and concepts for organization of seizures and epilepsies: report of the ILAE Commission on Classification and Terminology, 2005–2009. Epilepsia2010;51:676–685.